



**Հայաստանի Հանրապետության տնտեսության իրական հատված.
Չարգացման միտումները**

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում պայմանավորված է հիմնականում տնտեսության բազային ճյուղերի աճով: 2005թ. տնտեսության 5 բազային ճյուղերի հաշվին ապահովվել է ավելացված արժեքի արտադրության 113.9% աճ:

Ստորեւ բերված է ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ բազային ճյուղերի՝ 1995 եւ 2005թ.թ. համար: Ինչպես երեւում է գրաֆիկներից, տնտեսության որոշ ճյուղերի մասնաբաժինները ՀՆԱ-ում նվազել է, սակայն այն հիմնականում պայմանավորված չէ այդ ճյուղերի ֆիզիկական ծավալների կրճատմամբ:

ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ տնտեսության բազային ճյուղերի



Արդյունաբերություն

Հայաստանի Հանրապետությունը բազմաճյուղ արդյունաբերական ներուժ ունեցող երկիր է: Այս ճյուղը կազմում է ՀՆԱ-ի ավելի քան 18%-ը եւ ընդգրկում է զբաղվածների ընդհանուր թվաքանակի 15%-ից ավելին:


2005 թվականին հանրապետությունում ընթացիկ գներով թողարկվել է՝ 651.4 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանք: 2004թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է՝ 107.5%: Ինչպես երեւում էր վերը պատկերված գրաֆիկներում ՀՆԱ-ում արդյունաբերության մասնաբաժինը նվազել է: Սակայն հարկ է նշել, որ այդ անկումը պայմանավորված չէ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալների կրճատման հետ:

Աճի մեծ տեմպեր ապահովող արդյունաբերության ճյուղերն են՝ հանքարդյունաբերությունը, թեթև արդյունաբերությունը, սննդի արդյունաբերությունը, աղամանդագործական և ոսկեգործական արտադրությունները, մետաղագործական արդյունաբերությունը:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան

| | | 1996թ | 1997թ | 1998թ | 1999թ | 2000թ | 2001թ | 2002թ | 2003թ | 2004թ | 2005թ |
|---|--|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|
| 1 | Արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերը՝ նախորդ տարվա նկատմամբ, % | 133.5 | 110.8 | 102.7 | 108.5 | 103.0 | 105.1 | 114.2 | 114.9 | 102.1 | 107.5 |
| 2 | Արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերը (առանց էներգետիկայի), % | 124.0 | 104.0 | 100.1 | 111.0 | 108.8 | 104.4 | 124.2 | 118.2 | 100.8 | 107.0 |


Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի աճի դինամիկան



1995-2005թթ. արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի դինամիկան ունեցել է աճի միտում:

Արդյունաբերական արտադրանքն, ըստ արտադրության հատվածների, 2005 թվականին ունեցել է հետևյալ տեսքը՝


Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության հատվածների (%-ներով)



Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության հատվածների

| | | 1997թ | 1998թ | 1999թ | 2000թ | 2001թ | 2002թ | 2003թ | 2004թ | 2005թ |
|---|--|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|
| | Ամբողջ արդյունաբերությունը, % | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| 1 | Վերամշակող արդյունաբերություն, % | 69.6 | 62.6 | 64.1 | 64.5 | 64.8 | 66.7 | 66.8 | 63.1 | 65.1 |
| 2 | Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում, % | 26.9 | 33.5 | 32.0 | 30.2 | 28.6 | 24.4 | 22.2 | 19.1 | 17.5 |
| 3 | Հանքագործական արդյունաբերություն, % | 3.5 | 3.9 | 3.9 | 5.3 | 6.6 | 8.9 | 11.0 | 17.8 | 17.4 |

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքի դինամիկան



Ընդ որում վերամշակող արդյունաբերության մեջ սննդի արդյունաբերության մասնաբաժինը կազմում է մոտ 50%:


Շինարարություն

2005թ. ընթացքում պետական բյուջեի, սեփականաշնորհումից ստացված, մարդասիրական օգնությունների, կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 343078 քառ.մ. ընդհանուր մակերեսով՝ 1229 բնակելի շենք:

Իրականացված կապիտալ շինարարության ծավալը 2005թ. կազմել է՝ 426.4 մլրդ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատ աճել է՝ 17.2%-ով:

Հարկ է նշել, որ ՀՆԱ-ում կապիտալ շինարարության մասնաբաժինը 1995թ-ի 6.5%-ից 2005թ դարձել է՝ 21.6%:

Կապիտալ շինարարության ֆիզիկական ծավալի աճի դինամիկան




Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում 1995թ.-ի համեմատ նվազել է:

Այն տեղի է ունեցել նաեւ 1999 եւ 2000թ.թ.-ի ոչ բարենպաստ եղանակային պայմանների արդյունքում արտադրության ծավալի կրճատման հաշվին: Սակայն 2001թ.-ից նկատվում է ֆիզիկական ծավալի աճ:

Այս ճյուղի վրա իր դրական ազդեցությունն ունեցավ վերամշակող արդյունաբերության զարգացումը:

Գյուղատնտեսական արտադրանքի ֆիզիկական ծավալի աճի դինամիկան




Գրաֆիկում պատկերված 2005թ. գյուղատնտեսական արտադրանքի դրամական արտահայտությամբ ցածր ցուցանիշը պայմանավորված է գյուղատնտեսական արտադրանքի գների նվազման հետ, 2005թ.-ի ֆիզիկական ծավալի աճի տեմպը, նախորդ տարվա համեմատ կազմել է՝ 111.2%:

Տրանսպորտ եւ կապ

Այս ճյուղում նույնպես նկատվում է աճ: Բացի այն, որ աճել է ֆիզիկական ծավալը, ավելացել է նաեւ ՅՆԱ-ում այս ճյուղի մասնաբաժինը:

Տրանսպորտի եւ կապի բնագավառի ծավալի աճի դինամիկան




Առեւտուր

Վերջին տարիներին սպառողական շուկան բնութագրվել է կայուն աճի միտումով: Տարեց տարի ճյուղում արձանագրվել է ծավալների աճ եւ 2005թ. այն կազմել է՝ 1200.6 մլրդ. դրամ: Մանրածախ ապրանքաշրջանառության եւ բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի աճի առավել բարձր տեմպեր են գրանցվել սկսած 1995 թվականից:

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկան (մանրածախ ապրանքաշրջանառության եւ բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)*

| | | 1995 | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|-----------|---|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|--------|--------|
| 1 | Մանրածախ ապրանքաշրջանառության եւ բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը (մլրդ դրամ) | 273.7 | 366.9 | 464.4 | 506.6 | 563.1 | 601.1 | 691.9 | 784.2 | 926.9 | 1084.6 | 1200.6 |
| | Աճի տեմպը, % | 100.0 | 134.0 | 126.6 | 109.1 | 111.2 | 106.7 | 115.1 | 113.3 | 113.6 | 109.4 | 110.0 |
| այդ թվում | | | | | | | | | | | | |
| 2 | Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, մլրդ. դրամ | 220.0 | 279.7 | 322.8 | 364.3 | 393.8 | 422.3 | 504.3 | 560.0 | 710.2 | 849.5 | 886.2 |
| | Աճի տեմպը, % | 100.0 | 127.1 | 115.4 | 106.1 | 108.2 | 107.2 | 119.4 | 115.6 | 114.5 | 110.5 | 109.3 |
| 3 | Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, մլրդ դրամ | 53.7 | 87.2 | 141.5 | 142.3 | 169.3 | 178.8 | 187.6 | 190.0 | 216.7 | 235.0 | 314.4 |
| | Աճի տեմպը, % | 100.0 | 162.4 | 162.4 | 108.7 | 119.3 | 105.4 | 104.9 | 109.7 | 108.9 | 113.8 | 116.7 |

Առեւտրի ֆիզիկական ծավալի աճի դինամիկան



Այս ճյուղի վրա իր դրական ազդեցությունն է ունեցել զբոսաշրջիկության զարգացման ուղղված քաղաքականությունը:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ երկրում բազային ճյուղերի զարգացման միտումները դրական են:

** Առևտուրի ցուցանիշները ներառում է մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ցուցանիշների գումարը:*